

Շք. ԺԴ. օր Յիմանց: 24 6.1-11: Գրծ 9.1-22: Ա. Պտ 1.13-25: ԹՀ 2.12-22: Մտ 7.1-8.17: Մք 2.23-3.5:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՅԻՆՆԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ

Ի՞նչ կը ճշմարիտ չափազանց ճիշդը:

— Հայաստանեայց Եկեղեցի կը նշանակէ Եկեղեցի նայաստանցիներու, այսինքն եկեղեցի մը, որ ի բնէ կը պատկանի հայ ազգին կամ հայ ժողովուրդին: Ատոր համար կ'ըսուի նաեւ Հայոց Եկեղեցի, Հայ Եկեղեցի:

Ի՞նչ կը ճշմարիտ Մայրնոյ Եկեղեցի:

— Հայաստանեայց Եկեղեցին հաշուար մայրն է իր ժողովուրդին եւ ժողովուրդն ալ հողեւոր դասակներն են անոր: Վասնզի ժողովուրդը մերտութեամբ հողեւորացի կը ծնի անոր ծոցէն, անկից կ'աճէ իր հողեւոր սնունդը եւ կը պաշտպանուի անոր հովանիին տակ ընդդէմ իր հաւատքին եւ բարոյականին թշուառներուն: Այս պատճառով կ'ըսուի Մայրնոյ Եկեղեցի:

Հայ ժողովուրդը ո՞րչափ կը սիրէ իր Մայրնոյ Եկեղեցին:

— Հայ ժողովուրդը դէ՛ սկիզբէն ի վեր ջերմօրէն յարած է իր Մայրնոյ Եկեղեցուն, ի հարկին անոր սիրուն զոհերով իր ստացուածները եւ նոյն խնդիր արեւը:

Վարդանանց պատմիչը Եղիշէ կը պատմէ թէ այր եւ կին, բոլոր ժողովուրդը կ'աղաղակէին եւ կ'ըսէին Պարսկացի. «Պատրաստ ենք հալածուելու, մեռնելու, ամէն տեսակ նեղութիւններու եւ չարչարանքներու՝ սուրբ եկեղեցիներու համար, զոր տունն մեզի մեր նախահայրերը... որովհետեւ մեզի հայր կը հանջնակէ Սուրբ Աւետարանը եւ մայր՝ Առաքելական Կարգովիկ Եկեղեցին, ոեւէ չար անջըպետ մը չի կրնար հետոցնել միւլ այս Եկեղեցիէն» (Յեղ. Գ.):

Եւ արդէն Վարդանանց պատերազմը մղուեցաւ Սուրբ Աւետարանը եւ Մայրնոյ Եկեղեցին պահպանելու համար:

Ո՞վ կ'իմանց Հայաստանի Եկեղեցին:

— Ամենէն առաջ Թաղէոս Առաքեալ, Սանատրուկ Թաղաւորի ատեն: Սանատրուկ հովտակեցաւ Աւետարանի քարոզութեան, բայց իր աղջիկը, օրիորդ Սանդուխտ, լուսաւորուեցաւ Թաղէոս Առաքեալին շունչով: Սանատրուկ շատ աշխատեցաւ որ իր աղջիկը ուրանայ քրիստոնէութիւնը, բայց չյաջողեցաւ եւ իր զայրոյթը յայտնեցաւ համար սղանել տուաւ թէ՛ Թաղէոս Առաքեալը եւ թէ՛ օրիորդ Սանդուխտը: Թաղէոսէն հողը Բարթողիմէոս Առաքեալը քարոզեց Հայաստանի մէջ. բայց ան ալ պետական դժուարութեանց հանդիպեցաւ եւ նահատակուեցաւ:

Այս պատճառով քրիստոնէութիւնը պատահարածակ եւ շուտով կիրցաւ տարածուելու Հայաստանի մէջ:

Բայց երբ, շուրջ 300-ին, Տրդատ Թաղաւորին ատեն, Ս. Գրիգոր Լուսաւորչի առաքելութեամբ եւ ջանքերով եւ նոյն ինքն Տրդատի պաշտպանութեամբ քրիստոնէութիւնը պաշտօնական կրօնը հռչակուեցաւ Հայաստանի համար, Եկեղեցին շուտով մեծցաւ, զարգացաւ եւ տարածուեցաւ:

Ինչպէ՞ս համար Եկեղեցիներ այլեւայլ անուններ ունին. զոր օրինակ, Ս. Փրկիչ, Ս. Լուսչ, Ս. Նշան, Ս. Աստուածածիւն, Ս. Նրբարքաւթիւն, Ս. Լուսաւորիչ, Ս. Գրիգոր, Ս. Յովն, Ս. Բարսաղուտ, Ս. Թարգմանիչք, եւ այլն:

— Շատ էին ժամանակներէ ի վեր բարեպաշտիկ սովորութիւն եղած է անուններ դնել Եկեղեցիներուն, զանոնք իրարու հետ չըփոխելու համար. այնպէս որ Եկեղեցին մէկ է, բայց անոնց շէնքերն են որ նուիրուած են քրիստոնէական յիշատակներու եւ Եկեղեցւոյ նշանաւոր սուրբերու անուններուն: Եկեղեցիներու այս զոնապաշտ անունները յոյս կու տան, թէ հաւատացեալներ կը ներշնչուին սրբազնասուրբ իտրհուրդներէն եւ իրապետութիւններէն:

Ի՞նչ է Եկեղեցւոյն պաշտօնը:

— Եկեղեցւոյն պաշտօնն է դաստիարակել ժողովուրդը քրիստոնէական հաւատքով եւ այդ հաւատքը արտայայտել ժողովուրդի կեանքին եւ կենցաղին մէջ:

Այս նուիրական գործին մէջ յաջողելու համար Եկեղեցին կը պահէ Սուրբ Գիրքը, իբրեւ դասնարանը աստուածային պատգամներու եւ պատուիրանքներու. կը պահէ Եկեղեցւոյ ուղղափառ Հայրերուն գործերը եւ կ'առաջնորդէ ժողովուրդին՝ անոնց հեղինակութեամբ, Եկեղեցին է որ կը պահէ նաեւ Քրիստոնէական Եկեղեցւոյ վարկածի աւանդութիւնները, Եկեղեցին է որ աստուածային պաշտամունքին պէտպէս յօրինուածութեամբը, ինչպէս նաեւ կեանքի խօսքին կենդանի քարոզութեամբը շարունակ յարուած կը պահէ հաւատացեալներուն ուշադրութիւնը կրօնքի խորհուրդներուն եւ քրիստոնէական կեանքի իրողութիւններուն:

Եկեղեցին է որ հաւատացեալներու կեանքին բոլոր հանդուրաններուն վրայ իր պաշտօնեաներուն միջոցաւ անոնց հետ է. անոնց ուրախութեան ուրախակից, անոնց վիշտերուն վշտակից, իր ուսուցիչ եւ առաջնորդող բարձր դերին մէջ, միշտ ժողովուրդին հետ է եւ ժողովուրդին համար եւ նոյն ինքն ժողովուրդով կ'աշխատի:

† Կիր. ԺԵ. օր Յիմանց: Աշխարհամատրան
կամ Կանաչ Կիրակի: ՂԿ 6.12-49: Գրծ
9.23-31: Ա. Պտ 2.1-10: ՅԿ 2.23--3.12: Մտ
8.18--9.8: Մր 3.6-12:

JOHN

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ

ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ

(2.23-3.12)

23 Զատիկի ատին, մինչ Յիսուս Երուսաղէմ կը
գտնուէր, շատեր հաւատացին իրեն, երբ տեսան տնօր
24 գործած հրաշքները: Սակայն Յիսուս ինքզինք չէր
փաստահեր անոնց, որովհետեւ բոլորն ալ կը ճանչնար
25 եւ պէտք չունէր օրէ մէկուս մասին ուրիշին վկայու-
թեան, քանի ինք գիտէր թէ ինչ կայ այդ մարդուն
սիրտին մէջ:

3.1 Նիկողեմոս անունով փարիսեցի մարդ մը կար,
2 հրեայ իշխան մը, որ գիշերով Յիսուսի մօտ եկաւ եւ
ըսաւ անոր. «Վարդապետ, գիտենք որ դուն Աստուծոյ
կողմէ զրկուած ուսուցիչ մըն ես, որովհետեւ ո՛չ ոք
կրնայ գործել քու կատարած հրաշքներդ, եթէ Աստ-
3 ուած անոր հետ չըլլայ»: Յիսուս պատասխանեց անոր.
«Հաստատ գիտցիր, որ եթէ մէկը վերստին չծնի՝ չի
4 կրնար տեսնել Աստուծոյ արքայութիւնը»: Նիկողեմոս
հարցուց անոր. «Մեր մարդ մը ինչպէ՞ս կրնայ նորէն
ծնիլ: Կարելի՞ րան է որ ան կրկին մտնէ իր մօր որո-
5 վայնը եւ ծնի»: Յիսուս պատասխանեց. «Վստահ եղիր,
որ եթէ մէկը ջուրէն եւ Հոգիէն չծնի՝ չի կրնար երկին-
6 քի արքայութիւնը մտնել, որովհետեւ մարմինէն ծը-
7 նածը մարմին է, իսկ Հոգիէն ծնածը՝ հոգի: Իսկ ո՞ր
զարմանար, որ քեզի ըսի՞ թէ պէտք է կրկին ծնիք:
8 Հովր ուր որ ուզէ կը փչէ. դուն անոր ձայնը կը լսես,
բայց չես գիտեր թէ ուրկէ կու գայ եւ ուր կ'երթայ:
Նոյնպէս են բոլոր անոնք, որոնք Հոգիէն կը ծնին»:

9 Նիկողեմոս հարցուց. «Ինչպէ՞ս կը պատահի ա-
10 տիկա»: Յիսուս պատասխանեց. «Իսկ որ Իսրայէլի
Ժողովուրդին վրայ ուսուցիչ կարգուած ես, ատիկա
11 չե՞ս գիտեր: Վստահ եղիր, թէ ինչ որ գիտենք՝ կը խօ-
սինք եւ ինչ որ տեսանք՝ անոր մասին կը վկայենք,
12 բայց մեր վկայութիւնը չէք ընդունիր: Եթէ երկրաւոր
բաներու մասին խօսեցայ ձեզի եւ չհաւատացիք, ինչ-
պէ՞ս պիտի հաւատաք ինձի եթէ երկնաւոր բաներու
մասին խօսիմ»:

23 Now when he was in Jerusalem at the Passover feast, many believed in his name when they saw the signs which he did; but Jesus did not trust himself to them, because he knew all men and needed no one to bear witness of man; for he himself knew what was in man.

3 Now there was a man of the Phār'isees, named Nic-o-dē'mus, a ruler of the Jews. This man came to Jesus by night and said to him, "Rabbi, we know that you are a teacher come from God; for no one can do these signs that you do, unless God is with him." Jesus answered him, "Truly, truly, I say to you, unless one is born anew, he cannot see the kingdom of God." Nic-o-dē'mus said to him, "How can a man be born when he is old? Can he enter a second time into his mother's womb and be born?" Jesus answered, "Truly, truly, I say to you, unless one is born of water and the Spirit, he cannot enter the kingdom of God. That which is born of the flesh is flesh, and that which is born of the Spirit is spirit." Do not marvel that I said to you, "You must be born anew." The wind blows where it wills, and you hear the sound of it, but you do not know whence it comes or whither it goes; so it is with every one who is born of the Spirit." Nic-o-dē'mus said to him, "How can this be?" Jesus answered him, "Are you a teacher of Israel, and yet you do not understand this?" Truly, truly, I say to you, we speak of what we know, and bear witness to what we have seen; but you do not receive our testimony. If I have told you earthly things and you do not believe, how can you believe if I tell you heavenly things?



ԿԱՆԱԶ ԿԻՐԱԿԻ — Այդ անուանը կը տրուի Զատիկի Գ. Կիրակիին որ Աշխարհամատրան ատն է, բայց ընտ. եկեղեցական ծաղում կամ նշանակութիւն չունի, այլ հաւանաբար ժողովրդական հանդէսէ մը տանուած է, իբր գոյարից ատն եւ կանաչներով պարզարուելու պարպայ, թէեւ սրտամական յիշատակներ կը պակտին այս մասին:

Յիսուս՝ իր երուսաղէմ եղած միջոցին՝ դիչեր մը անտիկնալ աչքերու թիւն ձր ընդունեցաւ: Քանձոնայութեամբանի իշխանական մեծ յարմիրն անդամներէն եւ Փարիսեցիներու ազանդէն, սարքի Նիկողեմոս, որ Յիսուսի ըրած հրաշքները լսած էր եւ անոնց վրայ գննութիւն եւ ուսումնասիրութիւն կատարելով՝ հրաշքներուն ճշմարտութեան եւ ստուածայութեան վրայ համոզուած գոյացուցած էր, միտքը դրու մտնէն ալ Յիսուսը տեսնել, խտակցել եւ խորհրդակցել եւ անոր վրայ կատարեալ գաղափար մը կազմել: Իր ընկերներէն քաշուելով եւ նոյն խի իր գիրքէն ստիպուելով, երեւոյթներէ խարուստ ստղիկ մը շերեւնայու դիտմամբ, չճամբարձակեցաւ ցերեկ տուն Յիսուսի մօտ երթալ եւ դիչերուան գաղանութիւնը նախընտրեց:

Նիկողեմոս՝ Ռաբբի պատուանձնով աղջունեց Յիսուսը, որ խորունկ համարման հետեւանք միայն էր խորիստ փարիսեցի վարդապետին բերնին մէջ, եւ վրայ բերու թէ եղած հրաշքները անտիկնալ պարտաւորուած է նանչնայ, որ Յիսուս արտուածաւաք անձ մըն է եւ աստուածային գործողութեանց

միջոցով: Հարեաւ այդ խոստովանութեանց վրայ սկստ ընչ-ինչ խնդիրներ ստաշարելն Յիսուսի, Մեռիայի գայտանան եւ մեսիական Երկնից Աբքայութեան յայտնուելուն վրայ, արմհետե Յիսուսի խօսքը աղջոյնին պատասխանն է, այլ խնդիրի լուծում է: Յիսուս կ'ըսէ. «Ով որ վերածննալ չէ, Երկնից Աբքայութեան մտնակից չէ: Նիկողեմոս վերածնութիւն բուր նիւթուկան իմաստով կ'ստնէ, իբր թէ մարդ նորէն մօրը արգանդը մտնելու եւ ելլելու պէտք ունենար: Յիսուս պէտք կը զլայ բացատրել Նիկողեմոսի, թէ ինքը ոչ թէ նիւթական, այլ հոգեկան վերածնութեան վրայ կը խօսի, որ կը յայտնուի ջուրի արտաքին նշանով, եւ որ անհրաժեշտ է Երկնից Աբքայութեան մտնակից լինելու համար: Կ'հրճել որ Նիկողեմոսի միտքին շատ բարձր եւ անհասկնալի կզան Յիսուսի խօսքերը. տնոր համար հոգմը օրինակ բերու Յիսուս, արուն մային ա գորութիւնը կ'իմանաս, յայց ի'նչպէս լինելը, ուսկի'ց պտը եւ ո'ւր երթալը շնո խմանար, այդպէս ալ հաղւոյն գործողութիւնները ստոյլ են, հոյ չէ որ ինչպէս եւ ո'չ հանդամանքները յիմոցունին: Նիկողեմոս տակաւին չկրցաւ Յիսուսի խօսքերուն ներքին իմաստին թափանցել եւ կր պիտէր. «Ի'նչպէս միմայ ըլլալ այդ բանը, ի'նչպէս ջուրի վերածնութիւնը Երկնից Աբքայութեան կը հասցնէ»: Յիսուս այս անգամ մեղադրելով կը պատասխանէ. «Մարտչէի Ժողովարդին վարդապետ եւ, Սուրբ Գեղըը դիտես, ինչո'ւ շնո ինչեր որ ջուրը արտաթեան նշանակ է, ինչպէս մտրդարէն ալ գրած է. եւ ցանկցից ի վերայ ձեր ջուր սուրբ, եւ արքիսպիք յամենայն պղծութեանց ձերոց (Լուկ. ԼՊ. 25): Գէտք է տէն ոք զուտ' ըլլալ, թէ ինչ որ կը խօսիմ, գիտութեամբ կը խօսիմ եւ տեսութեամբ կը վիպիմ, եւ պէտք չէ որ վիպութիւն մերժուի: Ինչ ինչ որ խօսեցայ զեղի՝ պիտի եւ մտրդարէն միտքին սահմանին մէջ բաներ են եւ ստոնց խի հաւատարու կը դժուարանաս. ի'նչ պիտի ըլլես եւ ի'նչպէս պիտի հատուաս, երբ աւելի բարձր եւ տառուածային խորհուրդներու պատկանող կէտերու վրայ խօսիմ»:

Մինչեւ այսակը, Յիսուս մկրտութեան խորհրդով կատարուելիք վերածնութեան եւ ստացուելիք Երկնից Աբքայութեան վրայ խօսած էր, խի հետեւեալ խօսքերուն մէջ մարդկութեան խորհրդոյն բացատրութեան կը մտնէ: Այդ բացատրութիւնները երեք կէտերու կրնան վերածուիլ. 1. Արդւոյն Աստուծոյ մահը մարդկային փրկութեան համար. 2. Մարդկութեան խորհրդով ցուցուած Աստուծոյ ոչրը մարդուն վրայ. 3. Մարդուն փրկութեան եւ պատասխարութեան Գրիստոսի հաւատարուն հեա կապուած լինելը: Առաջին կէտը (Յովի. Գ. 14-16) բացատրուած է պղինձն օձին օրինակովը (Թիւք. ԻՊ. 9), որ Գրիստոսի խաչին նախատեղան էր: Երկրորդ կէտը (Յովի. Գ. 16-17) բացատրուած է բողոքատութեամբ մը, որ եթէ Աստուած իր Միածինը աշխարհ զրկեց, աշխարհը կորուսանելու եւ աշխարհը դատապարտուելու նորատակ չէր պիտար ունենալ, այլ միայն աշխարհի փրկութեան եւ աշխարհի սիրոյն համար հոս էր այդպիսի բան մը տնօրինել: Երրորդ կէտին մէջ (Յովի. Գ. 18-21) հաւատքը լոյսի նմանցուցած է. ինչպէս որ լոյսին մօտ եկողը կը լուսաւորուի եւ լոյսին հեռու փոխողը խաւարի մէջ կը մնայ, այսպէս ալ Գրիստոսի հաւատացողը կը փրկուի, եւ Գրիստոսի հաւատքէն խորհուրդ կը դատապարտուի: Գրիստոս կ'կաւ, ինքը լոյս է, բայց մարդիկ

երձէ՛ կը վափոյնն եւ խաւարը կը սիրեն. ով որ բարութիւն կը զորձէ՛ լոյսէն չի վախնար, այլ ով որ շարութիւն կը զորձէ՛ լոյսէն կը վախնայ եւ խաւարը կը սիրէ՛ որպէս զի իր դորձերը չյայտնուին:

Մեր նպատակը ընկերով Աւետարանի հատարեալ մեկնարանութիւնը կատարել, Յիսուսի վարդապետութեան ամփոփումը առ յաւան կը սեպնէք այս տեղ. եւ այնպէս պիտի ընենք որիչ ստիժներու մէջ ալ, առանց մանրամասն լուծմանց եւ յոռական գննութեանց մտնելու: Այս վարդապետական հատուածին մէջ հաստոյ կրկու գլխաւոր կէտեր կը պարունակուին, որք ջրիստոնէական դատանութեան հիմնադարերն են. 1. Մկրտութեան պորութիւնն ու անհրաժեշտութիւնը եւ 2. Մարգիղութեան խորհուրդով կատարուած փրկապորձութիւնը:

Ամբողջ հատուածը մենք բացատրեցինք իբր Յիսուս Նիկողեմոսին խօսուած ամբողջութիւն մը, այս է մեկնիչներուն ընդհանուր կարծիքը: Բայց սմանք դիտելով գիտնմք, խօսիմք, վիպայնմք յոյճակի բառերը, դարձեալ ոչ ընդունիմք, ոչ հաստատայք բառերը լուպին հասցէին, կարծեցին թէ Յովհ. Գ. 11 համարէն սկսելով հատուածը դատուած է եւ աւետարանիչը իր բերնէն կը խօսի առ Հրէայս կամ առ ընթերցողս. որովհետեւ ուրիշ տեղեր ալ աւետարանիչը Յիսուսի բերնով խօսուած վարդապետութեան կը յարէ իր կողմէ՛ դրուած մաս մը, առանց որոչ անցում մը դնելու: Բայց այստեղ յորիչ Յիսուսին խօսուած ընդունիլը աւելի ընդհանրացած է:

Նիկողեմոսի անձին դրայ ալ առիթ պիտի սեննանք նորէն խօսելու: Իսկ թէ այս տեսակցութիւնը ի՞նչպէս վերջացաւ, Նիկողեմոս ի՞նչ սպաւորութեանք մեկնեցաւ, Յիսուսի հետ ի՞նչ վերլուծով եւ ի՞նչ ձեռով յարարեութիւն հաստատեց, Աւետարանը բան մը չի դրեր, միայն թէ Յիսուսի է՛ ճամուկ աշակերտ մնաց եւ առանց ինքզինքը յայտնելու Յիսուսի պաշտպանութիւնն ալ ըրաւ:



Շք. ԻԱ. օր Յիմանց: 24 9.1-17: Գրծ
12.25--13.15: Ա. Պտ 4.12-19: ՅԿ 5.1-18:
Մտ 11.1-24: Մր 4.21-25:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ի՞նչ է խորհուրդներու պատմութիւնը:

— Ուղղակի Տէր Յիսուս-Քրիստոսէ հաստատուած խորհուրդները երկու են. հաղորդութիւն եւ մկրտութիւն: Մնացած հինգը յետոյ աւելցած են այդ երկուքին վրայ:

Պէտք է պիտանալ որ խորհուրդները դարերու ընթացքին, հետզհետէ բանաձեւուած են իրենց թիւով եւ աստուածաբանական իմաստով: Ուրիշ խօսքով, եթէ խորհուրդներ, իրենց նախնական պարզ վիճակին մէջ դոյութիւն ունին Սուրբ Գրոց մէջ, ինչպէս նաեւ Քրիստոնէական Եկեղեցւոյ հայրերու պարտաւճիւրուն մէջ. բայց ատենք իրենց հիմնական ձեւը եւ իմաստը առին 1545—1563-ին, Տրիտենդեան ժողովին մէջ¹, որ լատին եկեղեցւոյ ամենէն նշանաւոր ժողովներէն մէկն է. որովհետեւ Լատերականութեան կամ Բարեկարգական շարժումին հետեւանքով, Լատին Եկեղեցին այդ ժողովով ճշգրտելը բռնե-

¹ Տրիտենդ (Tridentum, փոքր. Trente) իտալական փոքրիկ քաղաք մըն է Թրիփօլի մէջ, որ այս ժողովով մշակուող եղաւ Եկեղեցւոյ պատմութեան մէջ:

ւիք վերջը հանդէպ այդ նորութեան (Բողոքականութեան) եւ սկսու ձեռնարկէս բարեկարգել ինքզինք եւ ուժաւորուել ընդդէմ Բողոքականութեան, որ այլեւայլ ուղղութեամբ սկսած էր ծաւալիլ եւ արմատանալ:

Եթէ խորհուրդներ հաւասար են իրարու իրենց ծագումով, պատմութեամբ եւ հարկաւորութեամբ:

— Եկեղեցւոյ վաղեմի շրջաններուն միայն երկու խորհուրդ կար, մկրտութիւն եւ հաղորդութիւն: Մեր Եկեղեցւոյ հայրապետներէն Յովհանն Մանդակունին ալ (478—490) երկու խորհուրդ կը ճանչնայ:

Եթէ խորհուրդներէն մասնք անպայման հարկաւոր են զքրիստոնէայ ըլլալու եւ զքրիստոնեայ ապրելու համար. ինչպէս՝ մկրտութիւն, դրոշմ, սպաշխարութիւն, հաղորդութիւն. ոմանք կամաւոր են, ինչպէս ամուսնութիւն եւ ձեռնադրութիւն. իսկ Կարգ հիւանդաց պատահական է:

Եթէ խորհուրդներն որո՞՞մք կարելի են եւ արո՞՞մք ո՛չ:

— Մկրտութիւնը մի է. այսինքն՝ մէկ ոմնքամ մկրտուածը երկրորդ անգամ չի կրնար մկրտուիլ. նոյնպէս Դրոշմը:

Սպաշխարութիւն եւ Հաղորդութիւն միշտ կը կրկնուին:

Ամուսնութիւնը կը կրկնուի երբ ամուսիններէն մէկը կամ միւսը մեռնի եւ կամ երբ ամուսնալուծում պատահի եւ լուծուածներ օրէնքով, այսինքն ամուսնալուծման վճռով, չեն զրկուած նորէն ամուսնանալու իրաւունքէն:

Ձեռնադրութիւնն ալ թէ՛ կամաւոր է եւ թէ՛ չի կրկնուիր:

Իսկ Հիւանդաց Կարգը միայն հիւանդներու համար է, կամաւոր է եւ կրնայ կրկնուիլ:

Խորհուրդներն որո՞՞մք ինքնին կը ջնջուին:

— Սորհուրդները սկզբունքով անջնջելի են. Բայց անոնք որ կ'ուրանան իրենց հաստատեալ, հաւատք բառին քրիստոնէական եւ աստուածաբանական իմաստով, եւ կը յարին ոչ-քրիստոնէական կրօնքի մը, եւ անոնք որ անաստուած եւ հեթանոս կ'ըլլան՝ ուրանալով իրենց քրիստոնէութիւնը, այնպիսիներու վրայ ինքնին կը ջնջուին կատարուած խորհուրդները:

Դարձեալ, անոնք որ ձեռնադրութեամբ եւ օծումով կարգ առած են եւ այլեւայլ պատճառներով կամ հարկի տակ կարգազուրկ եղած են եւ կամ ինքնին կարգաթող եղած են, այնպիսիներու վրայ կը ջնջուի խորհուրդը:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻՏՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ
(5.19-30)

19 Յիսուս անոնց լսաւ. «Հաստատ գիտցէք, թէ մարդու Որդին ինք իրմէ ոչինչ կը կատարէ, այլ կը կատարէ միայն այն՝ ինչ որ կը տեսնէ թէ Հայրը կը կատարէ: Որովհետեւ ինչ որ Հայրը կը դործէ, Որդին ալ նոյնը կը դործէ: Հայրը կը սիրէ Որդին եւ անոր ցոյց կու տայ ինչ որ ինք կը կատարէ: Տակաւին ձեր տեսածներէն աւելի սքանչելի դործեր ալ ցոյց պիտի տայ Որդին, այնպէս որ դուք պիտի զարմանաք: Ինչպէս որ Հայրը մեռելները կը յարուցանէ եւ կեանք կու տայ անոնց, նոյնպէս ալ Որդին կեանք կու տայ անոնց՝ որոնց ինք կ'ուզէ: Եւ Հայրը ոեւէ մէկը չի դատեր, այլ դատելու իշխանութիւնը ամբողջութեամբ յանձնած է իր Որդիին, որպէսզի բոլորն ալ պատուեն Որդին, ինչպէս որ Հայրը կը պատուեն: Ան որ չի պատուեր Որդին, չի պատուեր Հայրը որ զայն զրկած է:

24 «Հաստատ գիտցէք, ան որ իմ խօսքերս կը լսէ եւ կը հաւատայ անոր որ զիս զրկեց, յաւիտենական կեանք ունի եւ պիտի չըստասպարտուի, որովհետեւ արդէն իսկ մահէն կեանքի անցած է: Վստահ եղէք, ժամանակ կու գայ — եւ արդէն իսկ եկած է — երբ մեռելները Աստուծոյ Որդիին ձայնը պիտի լսեն եւ լսողները պիտի ապրին: Որովհետեւ, ինչպէս որ Հայրը կեանք պարգեւելու զօրութիւնը ունի իր մէջ, այլ զօրութիւնը տուած է նաեւ Որդիին: Նոյնպէս ալ դատելու իշխանութիւնը տուաւ Որդիին, որովհետեւ անիկա մարդու Որդին է: Ուրեմն մի՛ դարձանաք որ ըսի, թէ ահա կու գայ ժամանակը, երբ բոլոր անոնք որոնք գերեզմաններու մէջ են՝ պիտի լսեն անոր ձայնը եւ դուրս գան. անոնք որ բարիք դործած են՝ յարութիւն պիտի առնեն եւ ապրին, իսկ անոնք որ չարիք դործած են՝ յարութիւն պիտի առնեն եւ դատասպարտուին: Ես ինձմէ չէ որ կը դատեմ, այլ կը դատեմ այնպէս ինչպէս Հօրմէս կը լսեմ. եւ ուրեմն իմ դատաստանս արդար է, որովհետեւ կը զարծադրեմ ո՛չ թէ իմ կամքս, այլ կամքը անոր՝ որ զիս զրկեց»:

19 Jesus said to them, "Truly, truly, I say to you, the Son can do nothing of his own accord, but only what he sees the Father doing; for whatever he does, that the Son does likewise. 20 For the Father loves the Son, and shows him all that he himself is doing; and greater works than these will he show him, that you may marvel. 21 For as the Father raises the dead and gives them life, so also the Son gives life to whom he will. 22 The Father judges no one, but has given all judgment to the Son, 23 that all may honor the Son, even as they honor the Father. He who does not honor the Son does not honor the Father who sent him. 24 Truly, truly, I say to you, he who hears my word and believes him who sent me, has eternal life; he does not come into judgment, but has passed from death to life.

25 "Truly, truly, I say to you, the hour is coming; and now is, when the dead will hear the voice of the Son of God, and those who hear will live. 26 For as the Father has life in himself, so he has granted the Son also to have life in himself, 27 and has given him authority to execute judgment, because he is the Son of man. 28 Do not marvel at this; for the hour is coming when all who are in the tombs will hear his voice 29 and come forth, those who have done good, to the resurrection of life, and those who have done evil, to the resurrection of judgment.

30 "I can do nothing on my own authority; as I hear, I judge; and my judgment is just, because I seek not my own will but the will of him who sent me. 31 If I bear witness to myself, my testimony is not true; 32 there is another who bears witness to me, and



ԱՆՈՒՄԻՐ ԿԻՐԱԿԻ. — Այսպէս կը կոչուի Յիսուսը Դ. Կիրակին, որ Զատիէն 22 օր հաջորդ կու գայ եւ Զատիկին պէս 35 օր շարժականութիւն ունի: Այս անունը բնուէ հիւսկեցական ծաղուած կամ նշանակութիւն չունի, այլ Կանաչ Կիրակի անունին նման զարմանային եղանակէն առնուած ժողովրդական յորջորջում մըն է, որովհետեւ դաշտերը կանաչնալէն հաջորդ նախ եւ առաջ կարմիր կակաչներով կը զարդարուին:

Պրորատիկէի սնունով մահադրեցինք Յիսուսի ընդորձակ քարոզու-

թիւններէն այս հաստատածը, որովհետեւ Յովհաննէսի աւետարանին մէջ ան-
միջապէս կը հետեւի Պրորատիկէի բժշկութեան, եւ անոր հետ յարակցութիւն
մըն ալ կը ցուցնէ իւսպէն սկզբնաորութիւնը. Պատասխանի իսկ Յիսուս եւ
առէ ցնասա: Այսուհանդերձ շինք անդիսամար, թէ աւետարանիչներ սովոր-
ութիւն ունին իրարու միացնելու իրողութիւններ եւ քարոզութիւններ, ո-
րոնք մի՛այն հետաւոր կապեր ունին իրարու հետ, եւս եւ նիւթերու կապակի-
ցութեան շնորհիւ ի մի կը ձուլեն տարբեր ստիճաններու մէջ խօսուած քարոզու-
թիւնները: Եկրկնայ դարապաշխ մէջ ալ դիտելի է որ Յիսուս արդէն Պրորատ-
տիկէի հետացած էր եւ տարբին մէջ բժշկեալ անդամաւորներն հանդիպում, եւ
անկէ ետքը Հրէից հակառակարանութեանց յաճում տալու սկսում էր:

Ուրիշ դիտելի կէտ մըն ալ սա է, որ այն քարոզութիւնը ժողովրդեան
խօսուած ընդորձակ եւ հրապարակային քարոզութեանց ստաջիւնն է. եւ որ-
չափ ալ իմաստը բարձր է անորինական խորհրդոց հետ առնչութիւնը չտա,
եւ որչափ ալ թէ՛ իմաստները եւ թէ՛ բառերն իսկ մեկնութեան կարօտ, եւ
որբայն մեկնիչներու կողմէ ընդորձակ գրութեանց նիւթ ընծաւում, այ-
սուհանդերձ մենք որ պարզապէս պատմական սին կը հետեւինք, սխալ բա-
ւականանք քարոզութիւններ պարունակող հաստատներու լոկ ներքին ի-
մաստը քաղել եւ դայն համատարե յառաջ բերել, աւանց բառերու եւ բա-
ցատարութիւններու մանրամասն մեկնութեանց մտնելու, եւ սլ ալ կ'ուզենք
անոնց պատարութիւնները կամ խորհուրդները լուստրանելու համար երկու-
րորէն գրել:

Այդ քարոզութեանց մէջ Յիսուսի նպատակն է իր մեծիպագութիւնը
պաշտպանել յայնանպէս, յաւելլով անոր վրայ պարտաւոր մըն ալ, որ Հին
Կտակարանի մէջ շատ բացայայտ չէր, թէ տինկաշխալ Մեծիան, որ իբր Որդի
Մարդոյ կ'երեւի, իսկապէս Որդի Աստուծոյ է, աստուածային դորձողու-
թեանց հաղորդ, եւ աստուածային կարողութեան մասնակից: Քարոզութեան
առաջին մասին մէջ այդ կէտերուն վրայ կը խօսի եւ դիտաւոր սյուրազաներ
յառաջ կը բերէ յիսկ երկրորդ մասին մէջ իր մեծիպագութեան փաստելը կամ
վկայութիւնները կը թուէ եւ կը բացատրէ: Քարոզութիւնը կը կնքէ Հրէից
թիրահաւատութիւնը յանդիմանելով:

Հրեայք պայծակեղեր էին եւ Յիսուսը իբր հայհոյիչ կը նկատէին, որով-
հետեւ դիտուում իրեն Հայր, եւ զինքն Աստուծոյ Որդի կոչելով, Աստուծոյ
հաւատար Աստուած ըլլալ կը յաւանդէր: Յիսուս այդ ուժբաստանութեանց
հանդէպ, Բա՛ւ, մի՛ լիցի, անանկ խօսք շըրի, պատասխանը չի տար. այլ
ըսածը բացատրել ուղերով՝ ըսածը հաստատել կ'ուզէ, միայն թէ այլընդոյ-
րոյ իմաստ մը չտրուի իր խօսքին:

Ինչո՞վ է որ յայտարարութեան մը ստուգութիւնը կրնայ հաստատ-
ւել — ի հարկէ դարձով: Արդ՝ Յիսուս աստուածային կարողութեան միայն
հետաւոր դարձիւր կը հաստատէր, ինչպէս էր Պրորատիկէի անդամաւորներն
բժշկութիւնը, ինչպէս էին օարիէ ի վեր կատարուած հրաշալի բժշկութիւն-
ները: Արդ՝ իբր լոկ որդի մարդոյ, սխալ չհարեմար նա առնիլ յանձնէ եւ
նշիմչ. իսկ Հրեայք կը տեսնեն որ կը դարձէ, պէտք է ուրեմն համոզուին թէ
ինքն ալ կը դարձէ, ինչպէս որ կը տեսնէ որ կը դարձէ Հայր Աստուած, որ
իւր Որդեայն կը ցուցնէ ինչ որ ինքն կը դարձէ: Եւ ստիպան միշտու հիմա
ըրածները աստուածային գործերուն լրումը չեն, այլ իրենց դարձանք արդող
գործերէն շատ աւելի մեծ գործեր ալ սխալ տեսնեն տակաւին: Իբր օրինակ
տակելի մեծ գործերու կը մեզ Յիսուս մեծելներու վերակենդանութիւնը եւ
մարդոց դատաստանը, որոնք Հօր Աստուծոյ գործերն են, այլ Որդին ալ
նոյները կը դարձէ՝ իբր հաղորդ աստուածային կարողութեան:

Յարաբխանը այդտեղ իր կրկին իմաստներուն ներքեւ ալ կ'առնուի.
Մարմնական մահուրնէ յետոյ՝ ի մեռելոց վերակենդանութիւն, եւ հոգեկան
մահուրնէ յետոյ՝ ի մեռելոց վերաբարութիւն. իսկ դատաստանն ալ կ'ի-
մացուի թէ՛ իբր դատաստարութիւն եւ թէ իբր դատաստարութիւն, Հօր Աս-
տուծոյ վերադարձում՝ վերակենդանութիւն եւ վերաբարութիւն տալու կարո-
ղութիւնը ունի նաեւ Որդին, որ իր քարոզութեամբ փրկութիւն կը շնորհէ.
Եւ դայք կը հատարէ առանց իրից բնադատութեան, այլ իր կատարելով կամ-
քով, ուստի ինչ սխալ որ կ'ընծայուի Հօր, նոյնը սխալ ընծայուի եւ Որդ-
այն:

Այստեղ խօսքը աւելի յատուկ կերպով վերադարձնում է վրայ կամ փոփոխի, եւ դատաստանն ալ դատապարտութեան իմաստով կ'անուի: Ով որ Յիսուս-Մեսիան կ'ընդունի ա. խօսքերուն կ'անուայ եւ կը հնազանդի, եւ կը հաւատայ թէ նա Աստուծոյ կողմնէ եկած է, նա կ'ապրի, այսինքն յա-
հրահանգան փրկութեան կ'արժանանայ, դատապարտութեան ներքեւ չ'իյ-
նար, եւ իր հոգեւոր մահը հոգեւոր կենդանութեան կը փոխուի: Այդ փրկու-
թեան ժամանակը մօտայաւ է, մանաւանդ թէ հասած խն է: Յիսուս այդ
կեանքը պիտի աայ, սրովհետեւ նա կենդանացնելու կարողութիւն ունի,
միանգամայն աստուածային իշխանութեան մասնակցութեամբ կարող է դա-
տակ մարդիկը եւ փրկութեան արժանաւորները զատել սնարժաններէն:

Հոգեւոր փրկակենդանութեան հաստատութիւնը կը քաղէ Յիսուս մարմ-
նաւոր վերակենդանութենէն: Ինչպէս որ բոլոր մարդիկ որ մեռան ու թող-
ւեցան, որ մը աստուածային հրամանով պիտի փրկակենդանանան, բայց ոչ
ամէնքը նոյն կերպ. այլ ոմանք վարձատրութեան պիտի արժանանան իրենց
բարի դարձոց համար, եւ ուրիշներ դատապարտութեան պիտի ենթարկուին
իրենց չար դարձոց համար: Նոյնպէս ալ Յիսուսի ժայնով ամէնքը հոգեւոր
կենդանութեան կը կոչուին, այլ կը փրկուին միւսն անոնք, որ անոր քա-
րաղութեանց կը հնազանդին, իսկ անոնք որ անոր քարոզութիւնները չեն ըն-
դունիր, պիտի դատապարտուին: Արշափ այ իմաստ հրեւի այդ որոշումը,
ոսկիայն արդար դատաստանի միջեւ է այն: Յիսուս սնով իր կամքը առաջ
տանող կամ իր փոռքը միմտող մը չ'ըլլար. որովհետեւ կը կատարէ Աստուծոյ
կամքը եւ կը սրաշարանէ Աստուծոյ փառքը, որուն կողմէն եկած է:

Այս կէտէն կ'անցնի Յիսուս իրեն Աստուծոյ կողմէն եկած լինելուն
փաստերը յառաջ բերել. որովհետեւ լոկ ինքը չէ որ իրեն համար Աստուծոյ
կողմէ եկած լինելը կը վկայէ: Եթէ միայն ինքն վկայած ըլլար, դուք իր
վկայութիւնը ճշմարիտ չտեսնէր, իրը իր անձին համար վկայող. բայց ահա
ուրիշ շատ վկայողներ ալ կան:

Առաջին վկայութիւնը Յովհաննէս Մկրտիչի վկայութիւնն է (Յովհ.

Ո. 32-35), որուն կարծիքը ուղեցին հարցընել Հրեաները թէ արդեօք ի՞նքն
է Մեսիան. իսկ նա յայտարարեց թէ ինքն չէ՝ այլ Յիսուս. նազարեցիին է
տկնկալեալ Մեսիան (Յ 27): Այդ վկայութեան ճշմարիտ լինելը պէտք է ըն-
դունին Հրէաներ, որոնք Յովհաննէսը իբր մարգարէ պատուեցին, մինչև իսկ
պահ մը կարծեցին թէ նա ինքն Մեսիան է, կամ թէ սպասուած արևն է, եւ
սնով ուղեցին միջթարտել. բայց նա պզտիկ ճրագ մըն էր միայն:

Երկրորդ վկայութիւնը Յովհաննէսի վկայութեանն աւելի մեծ, Յիսուսի
կոտորած գործերուն վկայութիւնն է (Յովհ. Ո. 36): Յիսուս այնպիսի գոր-
ծեր կատարեց, որ միայն աստուածային զօրութեամբ կրնային կատարուիլ,
եւ ուր աստուածային զօրութիւն կը յայտնուի, այն տեղ հշմարտութիւն է.
որովհետեւ Աստուած իր զօրութեամբ ստութիւնը եւ խարէութիւնը չի կրնար
հաստատել:

Երրորդ վկայութիւնը նոյնիսկ Հօր Աստուծոյ ուղղակի տուած վկա-
յութիւնն է (Յովհ. Ո. 37-38), որ Յորդանանու վրայ հաստատեց Յիսուսի՝
Աստուծոյ կողմէ եկած ըլլալը (Յ 25), Թէպէտ Հրեայք ո՛չ անոր ձայնը լսեցին
եւ ոչ անոր կերպարանք տեսան, եւ ոչ ալ անոր շնորհքը ընդունեցան, վասն
զի չուզեցին հաստատել իրեն:

Չորրորդ վկայութիւնը ոմարդը Հին Կտակարանի մարգարէութեանց
վկայութիւնն է (Յովհ. Ո. 39-40): Հրեայք բոլոր իրենց հաւատաքը այն Գիր-
քերուն վրայ դրած են. արդ՝ եթէ լաւ քննեն պիտի տեսնեն, որ բոլոր մե-
սիական մարգարէութիւնները իր վրայ ոմարդշարդէս կը ճշմարտուին. եւ
եթէ իրենց հաստատեին իրօք հաւատարիմ լինէին, պէտք էր իր մեսիայու-
թիւնը ընդունէին:

Ասոր հակառակը՝ երբ ուր մեսիաններ ելան, որք միայն իրենց փառ-
քին եւ իրենց շահուն համար կը գործէին, անոնց ետեւէն երթալ չվարանե-
ցան. եւ եթէ նարէն ալ անանկներ ելլան, զարձեալ տեսնց կը հետեւին, միեւ
չեն ուղիք ընդունիլ զինքն, որ միայն Աստուծոյ անուամբ կը գործէ, իր
փոռքը չի փնտար, եւ իր անձին ու շահուն համար չ'աշխատիր: Եւ ասորեք
բան մըն ալ չէր սպասուեր Հրեաներէ, որ միայն անձնական փոռքերու ետեւէ
են, Աստուծոյ փոռքը չեն փնտար, եւ Աստուծոյ սէրը չունին սիրտերնուն
մէջ:

Շք. ԻԸ. օր Յիմանց: 24 11.14-32: Գրծ

16.6-40: Բ. Պտ 3.10-18: ՅՀ 7.1-13: Մտ

13.36-52: Մր 6.14-29:

ԽՈՐՀՈՒՐԳՆԵՐՈՒՆ ԽՈՐՀՈՒՐԳԸ

Եօթը խորհուրդներու մասին Ի՞նչ խորհրդաժողովուն կարելի է ընել:

— Գրեզոր Տաթևացի կ'ընէ երեք շաբաթ խորհրդաժողովուն, որոնց երկրորդն է հետեւեալը:

Եօթը խորհուրդներ կը պատրաստեն մեզ խորհրդներու եօթը առաջինութիւններ.

ա.— Միջառութիւնը խորհուրդն է հաւատքի. սրովհետեւ կը հաւատանք եւ անոց համար կը մկրտուինք:

բ.— Դրոշմը խորհուրդն է յոյսի. վասնզի յոյս դնելով Ս. Հոգիի շքութեան վրայ՝ կարող կ'ըլլանք յիմադրել թշնամիին (Սատանայ):

գ.— Հաղորդութիւնը խորհուրդն է սիրոյ. վասնզի սիրո՞վ է սր կը զօդուինք եւ կը միտանք մեր վշակք եղող Քրիստոսին, իբրեւ մարմին անոր մարմինէն եւ իբրեւ անդամ անոր անդամներէն:

դ.— Ապաշխարութիւնը խորհուրդն է արդարութեան. վասնզի զգլու՛մի, խոտո՛ւմանութեան եւ անաշխարութեան միջոցաւ կ'արդարանանք մեզքերէն:

ե.— Օծումը խորհուրդն է արդարութեան լրումին. վասնզի ելլելով կեանքի պատերազմէն (մեռնելով) կը մաքրենք զբախնքն ու վազին, մարմնաւոր պատերազմէն ելլողներուն պէս:

զ.— Կարգը խորհուրդն է խոհեմութեան եւ գիտութեան. որպէս ղի կարգաւոր մարդը խահմութեամբ եւ ղխտութեամբ կատարէ խորհուրդները եւ խրատէ ժողովուրդը եւ սորվեցնէ:

է.— Պսակը խորհուրդն է աղքատութեան. որպէս՞ ղի մարդ ողջախոհ ամուսնութեամբ ղսպէ թղջախոհ ցանկութիւնը եւ արդիւրէի շնութիւն եւ պոռնկութիւն ընելէ: (Գիլք Հարցմանց, էջ 587):



† Կիր. ԻԹ. օր Յինանց: Տօն Երեւման
Սրբոյ Խաչին: ԳՂ 6.14-18: ՂԿ 11.33--
12.12: ԳրԺ 17.1-15: Ա. ՅԿ 1.1-10: ՅԿ 7.14-
23: Մտ 13.53-58: Մր 6.30-44:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻՆՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ
(7.14-24)

14 Տաղաւարահարաց տօնակատարութեան յօտաւորապէս կէտին, Յիսուս տաճար ելաւ եւ սկսաւ ռուսուցանել: Հրեաներ կը դարձանային եւ կ'ըսէին. «Ինչպէ՞ս այս մարդը Սուրբ Գիրքերը դիտէ, երբ բնաւ չէ ուսած զանոնք»: Յիսուս պատասխանեց անոնց. «Ինչ որ ձեզի կ'ուսուցանեմ՝ իմ փարդապետութիւնս չէ, այլ անորը՝ որ զիս զրկեց: Ով որ կ'ուզէ Աստուծոյ կամքը կատարել, պիտի հասկնայ թէ Աստուծո՞՞ք է այս վարդապետութիւնը, թէ ես ի՞մ հեղինակութեամբս կը խօսիմ: Ան որ իր հեղինակութեամբ կը խօսի՝ իր անձին համար փառք կը փնտռէ, իսկ ան որ զինք զրկողին փառք կը փնտռէ, ճշմարիտ է եւ իտաքութիւն չկայ անոր մէջ: Մովսէս ձեզի Օրէնքը շտուա՞ւ. սակայն ձեզմէ ոչ ոք կը հնազանդի Օրէնքին: Ինչո՞ւ կ'ուզէք զիս սպաննել»: Ժողովուրդը պատասխանեց. «Իլուհա՞ր ես, ի՞նչ ես. ո՞վ կ'ուզէ քեզ սպաննել»: Յիսուս պատասխանեց. «Հրաշք մը դործեցի եւ բոլորդ վրդու վեր էք: Մովսէս հրահանգեց թշխատել ձեր զաւակները — թէեւ Մովսէս չէր սկսողը, այլ ձեր նախահայրերը — եւ դուք ձեր զաւակները կը թրխատէք Շարաթ օրով: Եթէ մէկը կը թրխատէք Շարաթ օրով, որպէսզի չբեկանուի Մովսէսի Օրէնքը, ինչո՞ւ զայրացած էք ինձի դէմ, որովհետեւ մէկը ամբողջութեամբ բժշկեցի Շարաթ օրով: Երեւոյթներէն մի՛ դատէք, այլ արդար դատաստան կատարեցէք»:



14 About the middle of the feast Jesus went up into the temple and taught. "The Jews marveled at it, saying, "How is it that this man has learning," when he has never studied?" "So Jesus answered them, "My teaching is not mine, but his who sent me; "if any man's will is to do his will, he shall know whether the teaching is from God or whether I am speaking on my own authority. "He who speaks on his own authority seeks his own glory; but he who seeks the glory of him who sent him is true, and in him there is no falsehood. "Did not Moses give you the law? Yet none of you keeps the law. Why do you seek to kill me?" "The people answered, "You have a demon! Who is seeking to kill you?" "Jesus answered them, "I did one deed, and you all marvel at it. "Moses gave you circumcision (not that it is from Moses, but from the fathers), and you circumcise a man upon the sabbath. "If on the sabbath a man receives circumcision, so that the law of Moses may not be broken, are you angry with me because on the sabbath I made a man's whole body well? "Do not judge by appearances, but judge with right judgment."

ԵՐԵՎԱՆԻ ԱՍՁ. — Կիրեղ Երուսաղեմի հայրապետին պաշտօնի անցած տարին տեղի ունեցաւ Խաչիմ երեւումը Երուսաղեմի մէջ. 351 տարուայ Հեղեկությունեան առաւել ժամը 3-ին աշուար մեծութեամբ լրտուար խաչ մը երեւաւ երկինքի վրայ, մէկ ծայրը Կաղզոթայի եւ միւս ծայրը Ձիթհնոց լիտան վրայ, եւ շատ ժամեր տեւելով՝ Երուսաղեմի լայր ընկերներէն տեսնուեցաւ, որ զըջմամբ ու լարեպաշտութեամբ սկսան եկեղեցիներ վայել: Սոյն երեւման պատմութիւնը պատկերաւ նախ իսկ Կիրեղէն որ զայն զրկեց Կ. Պոլիս Կոստանդ կայսեր, եւ որ այժմ մեր եկեղեցւոյ մէջ կը կատարուի իր ընթերցումը: Կիրեղի բացատրութեան համեմատ այլ երեւումը ուղղափառ դաւանութեան պաշտօնութիւնն էր Արիմաններուն մարտութեան դէմ՝ օր Կոստանդ կայսեր պաշարմութիւնը կը վայելէր: Կիրեղ կը ջանայ անոյժ ու սրտաւարեր խողբելով Կոստանդի մատուցութիւնը դրանէ: Օսյոք այլ երեւման տօնը կը կատարեն Մայիս 7-ին, թէեւ 351 տարուայ Հեղեկությունը Մայիս 10-ին հանդիպեր է, իսկ մեք կը կատարենք զայն Յինոնց եւ Կիրակին, Չատիկէն 28 օր ետքը, որով այս տօնն այ 35 օրերու շարժականութիւն կ'ունենայ, եւ Ապրիլ 19-էն մինչեւ Մայիս 23 կընայ հանդիպել:

Մինչ այս մինչ այն, երբ ժողովուրդին մէջ տար լինարանութիւններ կ'ըլլային Յիսուսի վրայ, և Տաղաւարահարայ տանին կէտն ալ, այսինքն շարքեր օրն ալ եղած էր, ահա յանկարծ Յիսուս կ'երեւայ Երուսաղէմի տաճարին մէջ, և ստորապար փայտաւրդի հաւաքման տեղը եղող Աղոճմանս սրահին մէջ՝ որձակ համարձակ իւր վարդապետութիւնները կը կրկնէ: Ժողովուրդը չորս կողմը կը ժողովուր, մտիկ կ'ընէ հանդարտութեամբ, երկար ժամեր համբերութեամբ կ'ունենդրէ, կը հիանայ, կը դարձնուի: Ի՞նչ էին Յիսուսի խօսածները, ի՞նչ կէտեր կը պարզարանէր, ի՞նչ մարդասէրութիւններ կը մեկնէր, ի՞նչ խրատներ կ'աւանդէր: Յովհաննէս աւետարանիչ, որ միակ պատմուի է Երուսաղէմի անցքերուն, մեզի չի բացատրէր: Հարկաւ Ս. Գիրքի մարդասէրական պատգամներն էին Յիսուսի քարոզութեանց նիւթը, վրան զի ժողովուրդը դարձանօք կը մտածէր. «Ի՞նչպէս կրնայ ոչք մարդը բարձր Ս. Գիրքը գիտնալ, քանի որ բնու. Օրէնքի ուսման հետեւած չէ»: Այդ խորհրդամտութիւնը աւելի կը վայելէ Երուսաղէմցիներուն քան թէ Գալիլէացիներու բերին: Գալիլէացիները տարիներով լսած էին Յիսուսի քարոզները և անհակոտակ Ռարքի կամ Վարդապետ անունը անոր տուած էին: Երուսաղէմցիներ, Գալիլէացիներ և Օրինակներու և Քահանաներու կեղերմը, իրենց զարանցներէն էլոյցները միայն օրհնուէն և ուսուցի կը ծանցուէին. և իրաւամբ կը դարձնուային երբ կը տեսնէին հիւան Յովհաննէսի սրբին, հիւանութեան աշակերտ Գալիլէացի Յիսուսը, որ Ս. Գիրքին վրայ կը խոսէր և կը ճառէր՝ բարձր իրենց Գալիլէացիներէն և Օրինակներէն աւելի բարձր և աւելի ընդարձակ հմտութեամբ:

Յիսուս կը լսէ այս զիտոյութիւնները, և քարոզութեանց կարգին կ'ուզէ անոնց միտքին կտակածը փարտաւել, և իւր ինքնութեան վրայ անոնց միտքը լուսաւորել. իմ վարդապետութիւնն չէ իմ, կ'ըսէ. այսինքն է, «Իմ դիտածն ու քարոզածն իմ աշխատութեամբ կարճամ վարդապետութիւնն չէ. տրուեալստան և մարդկային չէ իմ զիտութիւնն, ոչ խիսական և ստուածային: Վարդապետածն ալ իմ անձնականն չէ, ալ զիս առաջող Հօր Աստուծոյ վարդապետութիւնն է: Այլ որ Աստուծոյ կամքին համաձայն կ'ուզէ զարձել, պէտք է նախ զիտէ և խմանայ՝ թէ իմ խօսածն Աստուծոյ կողմէն է, և ոչ իմ անձնական խօսքս է: Ատոր ալ նշանն ու գննութիւնն ու խնայուածք շատ դիւրին է: Այլ որ իւր անձնական կամքով խօսք մը կը խօսի կամ զարծ մը կը կտտարէ, նա իւր հաճոյցը կը հետեւի և իւր փառքը կը փնտակ. իսկ ով որ Աստուծոյ կամքին կը հետեւի և անոր փառքը կը փնտակ, նա Աստուծոյ խօսքը կը խօսի կամ դարձը կը կտտարէ. և սլ որ Աստուծոյ կամքն ու խօսքը կը քարսկէ, նա աշխի է, նա ճշմարիտ է, նա արդար է, և ստութիւն, խարէութիւն և անիրտութիւն անոր վրայ չի կրնար զանաւոր»: Յիսուս ոչք սճով իւր քարոզութիւնը կը շարունակէ և միանգամայն իւր անձին պաշտպանութիւնը կը խօսի, Հրէաներու իրենց դէմ անեցած հակառակութեան կ'ովնարկէ, և իւր վրայ գրուած Շարաթ օրուան որբութիւնը բզակելու տագնապանութիւնը կը հերքէ:

Երկրորդ Զատիկէն ի վեր Յիսուս Երուսաղէմ հկամ չէր. 781-ի Ապրիլին մինչև 782-ի Հոկտեմբերը ստանութ ամիսներ անցած էին: Երուսաղէմի մէջ Յիսուսի վերջին գործը Պրորստիկէի անգամալսծը Շարաթ օրով բժշկուելն էր (Յ 52), և ոչք սակիթով յարուցուած սենեսպիտնի հակառակութիւնն ու հարածանքը միտքերու մէջ մնացած էին, և չէր ալ մոռցուած որ այս պատճառով Յիսուսը սպաննելու օրոշումը արուած էր (Յովհ. Ե. 18): Յիսուս ալ իւր քարոզութիւնը կամայ-կամայ այդ նիւթին կը ծտանցնէ, օրինապահութեան վրայ կը խօսի, և քարոզատութեան կը մանէ. «Մոխէսի օրէնքը ամենուր ալ արուած է, կ'ըսէ, բայց ամենքնիր ալ Մոխէսի օրէնքին վէմ կը դորձէք: Ի՞նչ իրաւամբ ուրեմն զիս կը մեղադրէք թէ Մոխէսի օրէնքը չեմ պահեր, և իբր օրինական մը զիս սպաննել կ'ուզէք»:

Յիսուս բացակայ Գալիլէերուն և քահանայադէմներուն կ'ովնարկէր. բայց ունիւրի ժողովուրդը կարծեց թէ իրեն կ'ովնարկէ, որ ամենեւին Յիսուսը սպաննելու կամք կամ երեսնթ չունէր: «Իմ՞նք էս, ի՞նչ էս, կ'ըսին, ի՞նչ ըսել կ'ուզես, լս'ւ. նայէ, այս տեղ քեզ սպաննել ուզոյ չկայ»:

Յիսուս և ոչ իսկ կ'անգրադանայ այդ ժողովուրդային ընդմիջման, որ պարզապէս իւր խօսքերուն ներքին իմաստը չիմանալէն առաջ կու գար, և հետեւաբար կը շարունակէ Շարաթ օրով բժշկութիւն կատարած ըլլալուն

արդատականութիւնը: Ձեռք բարի դարձ մը կատարեցի, կ'ըսէ, եւ դուք բոլոր
գործադրումներդ սնոր վրայ կը դարձնէք, եւ կը կարծէք թէ այդ դարձը օ-
րինադրանքութիւն է, մինչ բարեգործութիւն մը օրինակատարութիւն է եւ ոչ
օրինադրանքութիւն: Մովսէսի օրէնքով հրամայուած է ութերորդ օրը նորո-
ծինը թշնամել, թէպէտեւ այդ թշնամութեան օրէնքը Մովսէսով սկսած է,
այլ Մովսէսէ առաջ նահապետներէն սկսած էր: Արդ՝ ո՞չ ապաքէն ութերորդ
օրը Շարաթ օրուան ինկած ատեն, Շարաթ օրով թշնամութիւն կը կատար-
ւէք եւ գոյն Շարաթի օրէնքին դէմ գանցատութիւն չէք կարծեր, ինչո՞ւ
ուրեմն զիս կը մեղադրէք, որ Շարաթ օրով կատարեալ մարդը բժշկելու
բարի գործը կատարեցի: Ապա ուրեմն անանկ կարօքէն սոսկ արտաքին երե-
ւոյթի վրայ հիմնուելով գոտտատան մի՛ ընէք, այլ ամէն կարգեւր լաւ կէտե-
ցէ՞՝ որ գոտտատաններդ ուղիղ եւ արդար ըլլա՞ծ:

Նորէն սովորելը ժողովուրդին մէջ դարձանք եւ համակրանք կը շատ-
նան, եւ այս անգամ ուխտուար գաւառացիներէն զատ յատկապէս կը յիշուին
ընկի երուսաղէմցիներն ալ: Այդ գերջինները կը դիտեն. «Մ՞ըր մնաց մեր
սենեակներն հակառակութիւնը եւ վճիռը. մ՞ըր մնաց Յիսուսը գտնելու եւ
սղաննելու համար ջանքերնին. ահա սա համարձակ մէջտեղ ելեր է, սա-
նորի սրահին մէջ իւր տաշի խօսքերը կը կրկնէ, եւ ընտ գիտալութիւն ընող
կամ պինքը լոնկու աշխատող չկայ: Մի գուցէ մեր մեծերն ալ համարուած
ըլլան, թէ սո ճշմարիտ Օձեալ Մեհիան է, եւ սրատուած Փրկիչն է»: Երբ
մէկ կարգէ ոչս գիտալութիւնը կ'ընէ ժողովուրդը, միտ կարգէ կը յիշէ
հնուանդ նախադարձիկը կարծիքը, թէ Մեհիային մ'ի եւ ուստի՞ ըլլալը
յոյանի պիտի չըլլայ, անոր նախընթացն ալ յայտնի պիտի չըլլայ, յա՛ն-
կարձ պիտի երեւնայ գործի վրայ, ինչպէս եւ Մովսէս, որուն առաջին տա-
րիները անցան խորհրդատու կերպով, եւ գործի սկսած ատեն՝ յա՛նկարձ
եկաւ հետուար Մազիանէն, եւ ոչ ոք պիտի թէ ուստի՞ եկաւ: Նստոյէս պիտի
ըլլալ Մեհիան ալ: Երեւ այս Յիսուսի, կ'ըսէք ժողովուրդը, ուստի՞ ըլլալը
գիտե՞նք. Նադարէթի մէջ ապրած, Գալիլիայի մէջ քորուած, կրեմն երու-
սաղէմ ուլ իկած է, մինչ եթէ իրաւցնէ Օձեալ Մեհիան ըլլար, այս ամէնը
գիտցած պիտի չըլլայինք»:

Յիսուս այդ գիտալութիւններն ալ լսեց, եւ անոնց ալ ուղեց գոտտա-
խոսնել. «Կ'ըսէք թէ գիտէք թէ ես ո՞վ եմ եւ ուստի՞ եմ, եւ անոր համար կը
հետեւեցնէք թէ Մեհիան չեմ, վասն զի Մեհիային ուստի՞ ըլլալը պիտի չպիտ-
ցուի: Եւ այս ստատեղէնն ուլ, իրաւ օր իմ ուստի՞ ըլլալու չէք գիտեր, ո-
րովհետեւ ես ձեր գիտցածին պէս չեմ, ես ինքնիկեմ Գալիլիայէ սկսած եւ
ուսարեղ Նեսուած մէկը չեմ, այլ ճշմարտապէս զիս գրկած է իմ Յրիկուսը
Հայրը, զոր գուք չէք գիտեր, բայց ես գիտեմ, որովհետեւ նա զիս գրկած է,
եւ ես անկէ պրկուած եմ»:

Իրաւ է, կ'ըսէ Աւետարանը, իրաւ է որ Յիսուսը ձերգախաղի եւ սղան-
նէլ սրտած էին եւ իրենց սրտումը գործադրելու միտքը ուէնին, բայց Յի-
սուս սղաւ մնաց արեւէ փամպէ, վասն զի ա՛յնչպիսի էր Յիսուսի ներգործած
սղեղութիւնը, որ ոչ ոք համարձակեցաւ անոր ձեռք կրկնցնել, մանուանող
որ անոր մահուան համար սահմանուած ժամանակն ուլ լրացած չէր: Տա-
կալին պէտք էր որ Յիսուսի փորձապետութիւնը տարածուէր, եւ անոր հե-
տեւողներ շատնային, եւ այս աւթիւ ալ շատեր ու շատեր նորէնոր Յիսուսի
կը հաւատային: «Մի՞թէ, կ'ըսէին, Բրիսատը կամ Մեհիայն անկէ աւելի
հրաշքներ պիտի գործէ, կամ Մեհիայն անկէ աւելի հրաշքներ ու նշաններ
կը սպասուի՞ն, որ այս թողունք եւ արիւշի սղանինք: Այս Յիսուսը ամէն
պարագաներով մեր սղաւած Մեհիայն է»:

Յիսուսի այդ ուսուր քորողութիւնը փոխանակ Յիսուսի վտանդ մը
ըլլալու, աւելի անոր փոտաւորութեան առիթ եղաւ. նոր հաւատացողներ ալ
եղան, եւ Յիսուս ամենայն գիւրութեամբ տաճարէն ելաւ եւ քաջուեցու կո՛մ
Ձիթեմեայ լեւը, կա՛մ Բեթանիա պիղը, իւր սովորական օթեւաններէն մէ-
կը, թէպէտ Աւետարանը յայտնի չի յիշեր:



Հ Ր Ե Շ Տ Ա Կ Ն Ե Ր

Ի՞նչ կը Ազանակէ Հրեշտակ:

— Հրեշտակ մեր լեզուին մէջ կը նշանակէ պատգամաբեր, դեսպան: Իսկ առաքելական թուղթի մէջ կ'ընտրուի.— 25^ր որ անոնք սպասաւոր հոգիներ (հոգիք հարկաւորք) են, եւ կը պիտուին անոնց համար, որ փրկութիւն պիտի փառանդեն (Եբր. Ա. 14):

Ուրեմն Հրեշտակներն ալ Հոգի են:

Ի՞նչէ՞ր զխոնձ որ հրեշտակներ կան:

— Սուրբ Գիրքէն, Բարբ Ժարգութիւնը կը հաստատայ անտեսանելի ոգիներու գոյութեան: Համալոյսը լի՛ է դաշտնիքներով եւ հողեկան աշխարհը խորհրդաւոր ու զարմանալի յօրինուածութիւն մը ունի: Հետեւաբար մենք լինք կրնոր տեսնել զանոնք, բայց անոնք այլևայլ կերտարանքներով կ'իրական մարդոց, ինչպէս կը կարգանք Սուրբ Գիրքի մէջ:

Աւետարանի պատմութեամ ո՞ր մասերում մէջ կը յիշուիմ հրեշտակներ:

— Ս. Կոյս Մարտի Հրեշտակէն ընդունեցու Փրկին մայր ըլլալու տեսիլը (Ղուկ. Ա. 26—38):

Յովհաննէս Մկրտչի ծննդեան պատմութեան սկիզբը (Ղուկ. Ա. 18—19):

Երուսաղիմի յարութեան պատմութեան մէջ (Մատթ. ԻԸ., Ղուկ. ԻԴ., Յովհ. Ի.):

Եբէ հրեշտակներ հոգի են, ինչո՞ւ համար ուրեմն քիււար մարդու կերպարանով կը Յիարարդուիմ:

— Ինչպէս որ Աստուած ժարդու կերպարանքով կը յայտնուի, Հրեշտակներ ալ թեւաւոր ժարդու կերպարանքով կը նկարագրուին, իբրիւ խորհրդանշան իրենց երազանաս սպասարութեան:

Մարդիկ փամոնակին ալ խորհրդանշանը չինո՞ծ են օղակի կամ թեւաւոր անիւի ձեւով: Բայց փամոնակը նիւթական րան չէ, Հետեւաբար ո՛չ անիւ ունի, ո՛չ թեւ:

Ասոնք սեւէ պաղափար, սեւէ հոգեկան կամ խնայական ըմբռնում շօշափելի եւ հասկնուի ընելու համար ստեղծուած կերպեր եւ միջոցներ են:

Յիսուս-Քրիստոս ի՞նչ ըսաւ հրեշտակներու մասին:

— «Ձեր՞ք եղէք, այս փոքրիկներէն մէկը շարհամարէ՛ք, որովհետեւ անոնց Հրեշտակ-

ները երկինքի մէջ միշտ կը տեսնեն Հօրս երեսը, որ երկինքն է» (Մատթ. ԺԸ. 10):

Պիտի տեսնէք երկինքը բացուած եւ Աստուծոյ Հրեշտակները, որոնք կ'ելլեն ու կ'իջնեն Որդւոյ Մարդոյ վրայ» (Յովհ. Ա. 51):

Առաքեալներու ատեն եւ վաղեմի եկեղեցւոյ մէջ Հրեշտակներ մեծ դեր կը կատարեն, այսինքն շատ մը յայտնութիւններու մէջ կ'առաջնորդեն, Աստուծոյ կամքը եւ պատգամները կը յայտնեն: Պետրոս եւ Պօղոս Առաքեալներու կեանքին եւ անոնց թուղթերուն մէջ Հրեշտակներուն պաշտօնն ու ծառայութիւնները ուշադրաւ են:

Հրեշտակները անում եւ քիւ ունի՞մ:

— Ոմանց անունները յիշուած են Սուրբ Գրոց մէջ. զոր օրինակ, Գարբէլ, Միքայէլ, Ռափայէլ, Անայէլ, Ուրիէլ, Գահլէլ, Բարաբէլ, Ագոնիէլ, Փանուէլ, իսկ իրենց թիւը «հազարք հազարաց եւ բիւրք բիւրոց» ըսուած է, այսինքն անթիւ ու անհամար:

Ի՞նչն է զանի կը բաժնուիմ հրեշտակներ:

— Սուրբ Հայրերու զեբեքուն մէջ երեք դասի բաժնուած են. իւրաքանչիւր դասի մէջ երեք աստիճանաւորմով, այսպէս.

Ա. Դաս.— Աթուք, Բերովքէք, Աերովքէք:

Բ. Դաս.— Տէրութիւնք, Զօրութիւնք, Իշխանութիւնք:

Գ. Դաս.— Պատութիւնք, Հրեշտակուպետք, Հրեշտակք:

Նոր կտակարանի մէջ ակնարկութիւններ կ'ան այս դասակարգութեանց մասին:

— Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «Ո՛ր Հրեշտակներ, ո՛ր իշխանութիւններ, ո՛ր ալ զօրութիւններ կրնան զատել մեզ Աստուծոյ սէրէն» (Հռով. Ը. 38):

Գարձեալ. «Աստուած մեռնելէն յարոյց Քրիստոսը, նոտեցուց իր ալ կողմէ՛ր երկինքի մէջ, թողր իշխանութեան եւ տիրութեան, զօրութեան եւ տէրութեան եւ ամէն անտել վրայ» (Եփես. Ա. 20—21):

Հայոց պատմութեան ալ հրեշտակներու մասին քան մը կը յիշուի:

— Ս. Գրիգոր Լուսաւորիչ Արտաշատի Պոր Արթուրը նետուած մնաց 15 տարի. կը կարծուէր թէ ո՛ր Հոյսիւրի. բայց Տրդատ Թագաւորին քոյրը Ստրովիլուհա, կրպի մէջ հաստատի կ'ընդունի Հրեշտակէն, թէ ո՛րք է Ս. Գրիգոր եւ կը հանուի Պոր Արթուրէն:

Գարձեալ, սիլան տանգութեան մը համեմատ, Լուսաւորիչ իր բանաստեղծութեան

կրկար միջոցին, ամէն օր կ'ընդունէր իր պահապան Հրեշտակին այցելութիւնը, Համբարձման շորորդ օրը, Հրեշտակը չ'այցելեր բանտարկեալին եւ միւս օր երբ կը հարցնէ Հրեշտակին իր չ'աշուն պատճառը, Հրեշտակը սուբայտարութիւնը կու տայ.— Տէրն մեր երբ կրկինք համարձաւ, Հրեշտակներու իննիակ դասակարգութեան մէջ օր մը կեցու եւ դուարձացուց զանոնք: Իւրաքանչիւր դասակարգ ամէն տարի, իրեն եղած այցելութեան տարեդարձը կը տօնէ. արդ, կիրակի օրը մեր դասակարգի տարեդարձի օրն էր. որովհետեւ մեզի այցելած է Համարձման շորորդ օրը, ամբարտարութիւն ունէ՛նք, ասոր համար չեկայ:

